ԿԱՐԾԻՔ

Լիանա Ներսեսի Մարտիրոսյանի՝ «ՀՀ տպագիր և առցանց մամուլը՝ որպես քաղաքական միֆաստեղծման միջավայր (1990-2018)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ Ժ. 01.06 «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը: Լրագրողի մասնագիտությունն ունի ռազմավարական նշանակություն՝ հատկապես հակամարտությունների դաշտում գտնվող պետությունների համար, որոնց անվտանգությունն ու հակամարտության լուծման հեռանկարներն էապես կախված են հաղորդակցական գործընթացների կառավարման և տեղեկատվական ներազդման արդյունավետությունից: Հայաստանի արդի պատմության ընթացքում ՁԼՄ-ի կայացումը, ազատ գործելու կարողության ձեռքբերումը մեծ ջանքեր է պահանջել: Հատկապես 1990-ականների սկզբին, երբ հայաստանյան հասարակությունն ազգային զարթոնք էր ապրում և միևնույն ժամանակ բախվում էր անկախ գոյության բոլոր հնարավոր դժվարություններին, սկզբունքային կարևորություն է ունեցել հենց տպագիր մամուլը, որի հրատարակումն իրականացվել է սուղ ռեսուրսների, բայց բարձր պահանջարկի պայմաններում, և որից մեծապես կախված էր հասարակության մեջ պետության համար կարևորագույն երևույթների և գործընթացների ընկալումն ու դրանց մասնակցությունը: Այդ ժամանակ էր նաև, որ հիմքեր դրվեցին Հայաստոանում ազատ մամուլի համար, ուստի ատենախոսության հետազոտման օբյեկտը՝ ՀՀ տպագիր մամուլը /հետագայում նաև՝ առցանց եղանակով/՝ սկսած 1990-ականներից, ընտրված է ճիշտ, և հիմնավորված է:

Միֆերի ստեղծումն ու տարածումը ՁԼՄ անուղղակի գործառույթներից է, հատկապես՝ կաղաքական հաղորդակցություններում: Խնդիրը բազմիցս ուսումնասիրվել է, այդ թվում՝ հայաստանյան հեղինակների կողմից: Ատենախոսության հեղինակն այդ կապակցությամբ քննարկում է Կ. Յունգի, Զ. Ֆրեյդի, Է. Կասիրերի, Մ. Էլիադեի, Ռ. Բարտի, Ա. Լոսևի, Ժ. Սորելի, Կ. Թարդի, Կ. Լևի-Սթրոսի, Հ. Լասուելի, Վ. Պրոպպի, Զ. Քեմփբելի, Ռ. Ժիրարդեի մոտեղումներն, ինչպես նաև միֆերի ստեղծման և կիրառման հիմնախնդիրները մի շարք հայ

հեղինակների մոտ, որոնցից են նաև մեր գործընկերները՝ Դ. Պետրոսյանը, Զ. Ավետիսյանը, Ս. Գրիգորյանը, Ս. Դվոյանը, Վ. Հովհաննիսյանը, Ն. Մելքոնյանը, Է. Ասրիյանը, Կ. Յարալյանը, Հ. Շափաղաթյանը, Ա. Ավետիսյանը, և այլք: Հեղինակների կազմից և աշխատությունների անվանումներից կարելի է տեսնել, որ քաղաքական միֆերի ստեղծման և տարածման հիմնախնդիրներն ունեն միջառարկայական բնույթ՝ քննարկվում են փիլիսոփայության, սոցիոլոգիայի, ժուռնալիստիկայի, բանասիրության, քաղաքագիտության, սոցիալական հոգեբանության և այլ գիտությունների ոլորտային տիրույթներում:

Ընդհանուր տպավորություններ: Պետք է առանձնահատուկ նշել ատենախոսի կողմից հեղինակների մեծածավալ տեսանկյունների վերլուծությունը, ինչը թույլ է տալիս առավել համապարփակ մոտենալ քաղաքական միֆերի՝ մեդիա տիրույթում ձևավորման և տարածման գործընթացներին: Միևնույն ժամանակ, չպետք է մոռանալ, որ քաղաքական միֆերի մի մասը ստեղծվում է ոչ թե ԶԼՄ-ի և ժամանակակից առցանց մեդիայի կողմից, այլ՝ քաղաքականության սուբյեկտների, այդ թվում՝ քաղաքական առաջնորդների, իշխանության մարմինների, քաղաքական կուսակցությունների, քաղտեխնոլոգների կողմից: Այդ իմաստով ԶԼՄ-ը հանդես են գալիս ոչ թե որպես քաղաքական միֆերի հեղինակներ, այլև դրանց տարածման միջոցներ:

Հեղինակը գտնում է, որ «Ժամանակակից միֆերի ստեղծման և տարածման առաջատար ոլորտը քաղաքականությունն է» (Ատենախոսություն, էջ 15): Նման պնդումներ առանձին ուսումնասիրություններ են պահանջում, սակայն, օրինակ, կոմերցիոն գովազդը և մարքեթինգային տեխնոլոգիաները միֆերի ստեղծման և ամենօրյա տարածման առումով քաղաքականությանը ոչ միայն չեն զիջում, այլև, մեծ հավանականությամբ, գերազանցում են:

Աշխատանքում նկատելի է հեղինակի կողմից քաղաքական միֆերի ստեղծումն ու քաղաքական կյանքի վրա ներազդումը գերագնահատելու միտում, հավանաբար, քանի որ յուրաքանչյուր հեղինակ կարևորում է իր հետազոտության օբյեկտը: Մինչդեռ, քաղաքական կյանքում միֆերի ազդեցությանը պետք է ավելի իրատեսականորեն և զուսպ վերաբերել՝ հատկապես հաշվի առնելով բազում այլ էութենական գործոնների ազդեցությունը քաղաքական կյանքի, առաջնորդների և

հանրույթի քաղաքական վարքի վրա, որոնցից են տնտեսական, ռազմաքաղաքական, ներքին և արտաքին քաղաքական գործոնները:

Անհրաժեշտ է տարբերել լրագրողական աշխատանքի ժանրեր: Եթե խոսքը լրատվության մասին է, ապա այն միանշանակ պետք է առավելապես օբյեկտիվ և չեզոք լինի, մինչդեռ վերլուծականները, հեղինակային այունակը, կամ խմբագրի մոտեցումներն արտահայտող խոսքը կարող են արտացոլել առանձին և առանձնահատուկ տեսակետ, կարծիք: Այս իմաստով ատենախոսության մեջ կողմնակալության մեջ են մեղադրվում նաև հեղինակային նյութեր, որոնք արտացոլում են, օրինակ՝ խմբագրի սեփական դիրքորոշումը: Այսպես, խոսելով Առավոտ թերթի խմբագրի խոսքերի մասին՝ ատենախոսը նշում է. «Չնայած նրան, որ «Առավոտը» գրեթե միշտ օբյեկտիվորեն է մոտենում խնդիրների լուսաբանմանը, բայց այս օրերին դրա էջերում էլ կարելի էր գտնել նյութեր, որոնք դրական քողով էին պատում հասարակության ըմբոստության ալիքը» (Ատենախոսություն, էջ 92): Անշուշտ, այդպիսի նյութեր նույնպես միֆեր են ստեղծել, սակայն, որպես վերլուծություն, իրավունք ունեին լինելու:

Ընդհանուր առմամբ՝ տեքստը գրված է սահուն, համակարգված է, ունի հստակ և որակյալ վերլուծական բաղադրիչ:

Ատենախոսության արժեքավոր կողմերից են.

1. քաղաքական միֆերի և առասպելների տարբերակման փորձը (Ենթագլուխ 1.1): Գրականության մեջ այդ քննարկումն արդեն սկսված է, և հեղինակը բերում է օրինակներ, երբ հայ հեղինակներն այդ երկու եզրույթները նույնացնում են (միֆ, դից, առասպել):
2. Ատենախոսության առավելություններից է քաղաքական միֆերի վերաբերյալ ծավալուն և միջառարկայական տեսական հենքը:
3. Հայկական տպագիր մամուլի, այդ թվում՝ 1990-ականների սկզբներին լույս տեսած թերթերի արխիվային նյութերի մեծ ծավալի վերլուծությունը, տարածված քաղաքական միֆերի տիպերի առանձնացումը (դավադրության, «հերոս-փրկչի», «Ոսկե դարի», «դավաճանի» և այլ միֆեր) ու բացատրումը: Այստեղ այնուամենայնիվ պետք է հիշել, որ հայտնի ասացվածքի համաձայն՝ «յուրաքանչյուր հեքիաթում կա ճշմարտության հատիկ». քաղաքական

միֆերը կարող են որոշակիորեն արտահայտել օբյեկտիվ իրականությունը, սակայն՝ գեղարվեստական, ռոմանտիզացված, չափազանցված ձևերով: Պատահական չէ ատենախոսի կողմից փիլիսոփա Ա. Լոսևի խոսքերի հիշատակումն առ այն, որ «միֆը ոչ մի պարագայում չի կարող հանդես գալ որպես ֆիկցիա, հորինվածք» (Ատենախոսություն, էջ 61):

4. Հեղինակը ոչ միայն վեր է հանել և վերլուծել է ՀՀ նախագահի և ներկայումս վարչապետի պաշտոնում ընտրվածների, այլ նաև նախագահի պաշտոնում առաջադրված մյուս գործիչների շուրջ հայկական մամուլում շրջանառված քաղաքական միֆերը: Այս մոտեցումը թույլ է տվել քաղաքական միֆերի շրջանառումը դիտել ակտիվ քաղաքական պայքարի և մրցակցության համատեքստում: Այս իմաստով ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ նախագահական ընտրությունները և միֆաստեղծումը հայաստանյան մեդիամիջավայրում» գլուխը տեսական և կիրառական առումներով արժեքավոր վերլուծություն է, կարող է նաև օգտակար լինել մեդիա տեխնոլոգիաների մշակման և կիրառման, ինչպես նաև դրանց հայաստանյան փորձի և պատմության ամփոփման, այլ պետությունների օրինակները նույն սխեմայով վերլուծելու հնարավորությունների առումով:

5. Հետաքրքիր է և արդիական 2018թ-ի «Թավշյա հեղափոխության» վերաբերյալ միֆերի գլխավոր հերոսի՝ Ն. Փաշինյանի կերպարի և ճանապարհի վերլուծությունը մոնոմիֆի՝ հեքիաթային հերոսներին հատուկ ճանապարհով ընթանալու մոդելով (Ատենախոսություն, 3.2.): Այստեղ կարևոր է ոչ միայն վարչապետի թեկնածու Փաշինյանի՝ ի հայտ գալու, ընտրվելու և առհասարակ դերակատարման մասին բազում միֆերի վերլուծությունը, այլ նաև արտաքին քաղաքական սուբյեկտների վերաբերմունքի և դերի շուրջ կառուցված և տարածվող միֆերի քննարկումը: Ինչպես նախորդ, այնպես էլ երրորդ գլուխն իր ծավալուն նյութով և այն վերլուծելու մոդելով կարող է կոնկրետ կիրառական արժեք ունենալ քաղաքական տեխնոլոգների գործունեության մեջ:

թերություններից են.

Ատենախոսության մեջ գիտական նորույթի ձևակերպումը. «Աշխատության գիտական նորույթը կապվում է ՀՀ-ում տեղի ունեցած բոլոր նախագահական ընտրությունների ընթացքում իրականացված ընտրարշավների և դրանց վրա մեդիայի միֆաստեղծ դերակատարման, քաղաքական գործընթացների զարգացման և ընտրազանգվածի վրա դրանց ունեցած կողմնորոշիչ ազդեցության նորովի բացահայտման, ինչպես նաև 2018թ. «թավշյա հեղափոխության» և նոր մեդիայի աղերսները համակողմանիորեն քննության առնելու հետ» (Ատենախոսություն, էջ 6): Փաստորեն, նշվում է, թե ինչ է ուսումնասիրվել և համեմատվել: Մինչդեռ, գիտական նորույթը պետք է ներկայացնի այն, թե ինչ է ստացվել, բացահայտվել, պարզվել, և որքանով է այդ ամենը նոր գիտական գիտելիք պարունակում: Այսպես, օրինակ՝ սույն ատենախոսության գիտակ նորույթ կարելի է համարել քաղաքական միֆերի տիպաբանումն ու դուրսբերումը ՀՀ ընտրությունների պայմաններում, ներքին և արտաքին դերակատարների վերաբերյալ միֆերի նկարագրումը, ՀՀ-ում «Թավշյա հեղափոխության» միֆականացումը, և այլն:

2. Հեղինակը նշում է, որ «հայաստանյան մեդիայում ի հայտ եկած քաղաքական միֆերը բախտորոշ դեր են ունեցել հայ քաղաքական կյանքում» (Ատենախոսության նպատակը, էջ 6): Սա նշանակում է, որ եթե տվյալ քաղաքական միֆերը չտարածվեին, ապա ընտրությունների արդյունքները այլ էին լինելու: Սա շատ վիճելի կարծիք է, հատկապես՝ քաղաքական գործընթացների և տեխնոլոգիաների տեսանկյունից, ինչպես նաև իրական քաղաքական գործընթացների վերլուծության իմաստով, որոնք ենթարկվում են ավելի էութենական գործոնների ազդեցությանը, այդ թվում՝ տնտեսական, ռազմական, և այլն, մինչդեռ միֆերը կարող են լրացուցիչ համարվել:

3. Որոշ դեպքերում ատենախոսը, կարծես, ինքն է միֆերի ազդեցության տակ ընկնում, օրինակ, երբ խոսում է 2018թ. «Թավշյա հեղափոխության» մասին՝ նշելով, թե այն «քաղաքական բազում տեխնոլոգիաների, Ջ. Շարպի փափուկ ուժի մեթոդների և, իհարկե, քաղաքական տարբեր միֆերի միասնություն էր, որը ստեղծվել և մշակվել էր «հմուտ վարպետների» կողմից կանխորոշված

նպատակներին հասնելու համար» (Ատենախոսություն, էջ 87): Սա այն միֆերից է, որոնք ակտիվորեն շրջանառվում են, մինչդեռ ատենախոսի մոտ դա պնդում է: Անկախ նրանից, թե ինչպես է հեղինակը վերաբերում «Թավշյա հեղափոխությանը», և դրա համար ունի իրավունք և պատճառներ, անհրաժեշտ է հետազոտության օբյեկտին չեզոք վերաբերել:

Ընդհանուր առմամբ՝ ատենախոսության մեջ կարևոր ոլորտային ենթադիրների բարձրացումը և ուսումնասիրությունը, դրանց լուծմանն ուղղված ուսումնական ջանքերն ու ստացված արդյունքները հիմք են՝ կատարված շխատանքի գնահատման համար: Հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այսպիսով՝ ատենախոսության մեջ արծարծվող հիմնախնդիրների վերլուծության և լուծման կարևորությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոս Լիանա Ներսեսի Մարտիրոսյանը՝ Ժ. 01.06 «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արթուր Վլադիմիրի Աթանեսյան
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

22.05.2025թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Գնահատման [illegible] բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ. Վ. Հով[illegible]